ՀՏԴ : 7(479.25)(063) + 74/76(479.25)
DOI https://doi.org/10.52853/25792830-2021.1-127

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կառավարության հովանու ներքո, Միլանի հայ մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում 1975-1988 թթ. կազմակերպեց հայ արվեստի հարցերի ուսումնասիրությանը նվիրված միջազգային 5 սիմպոզիում: Հոդվածում քննության են առնվում վերոնշյալ սիմպոզիումներում նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի վերաբերյալ ուսումնասիրությունները, լուսաբանվում և արժևորվում երկու տասնյակից ավել գիտական հոդվածներ և ներկայացվում են սիմպոզիումի կազմակերպման հետ կապված որոշ մանրամասներ:

Բանալի բառեր – սիմպոզիում, խորհրդային կերպարվեստ, դիմանկար, սփյուռքահայ արվեստ, Մարտիրոս Սարյան, ճարտարապետություն:

Ներածություն

Մեծ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը և գործառույթը հանրապետական և միջազգային գիտական նստաշրջանների, սիմպոզիումների կազմակերպման և անցկացման գործում:

Միջազգային համագործակցության և աննախընթաց մեծամասշտաբ գիտական միջոցառման կայացման տեսանկյունից չափազանց կարևոր էր հայ-իտալական կապերի հաստատումը: Միլանի հայ մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնի և ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի համագործակցության կարևորագույն արդյունքներից էր Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների կազմակերպումը, որը սկիզբ առավ 1975 թվականի հունիսի 28-30-ը հյուսիսային Իտալիայի Բերգամո քաղաքում[1]: Գիտաժողովի թեման էր հայ միջնադարյան արվեստը և ճարտարապետությունը (բրոնզե դարից մինչև ուշ միջնադար): Հրավիրված էին մասնակիցներ 14 երկրներից՝ Խորհրդային Միության, Իտալիայի, Ֆրանսիայի,

---

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, marykirakosyan@mail.ru, հոդվածի ներկայացման օրը՝ 14.12.2020, գրախոսման օրը՝ 13.01.2021, տպագրության ընդունման օրը՝ 27.01.2021:

[1] Մինչ այդ՝ 1974 թվականին, ձևավորվեց 10 հոգուց բաղկացած խորհրդային պատվիրակությունը՝ Ռուբեն Զարյան, Ալեքսանդր Սահինյան, Ստեփան Մնացականյան, Արսեն Զարյան, Մուրադ Հասրաթյան, Նոնա Ստեփանյան, Կորյուն Ղաֆադարյան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտից՝ Բաբկեն Առաքելյան, Մոսկվայից՝ Հովհաննես Ղալփախչյան, Լենինգրադից՝ Տատյանա Իզմայլովա: ԳԱ նախագահության որոշմամբ Ռուբեն Զարյանը նշանակվեց պատվիրակության ղեկավար, տե՛ս **Զարյան Ռ.,** Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, Երևան, 2016, էջ 367:

Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավ-սլավիայի, Լիբանանի և այլ երկրների 120 գիտնականներ, որոնք տարբեր բաժանմունքներում հանդես եկան զեկուցումներով[2]:

1978 թ. սեպտեմբերի 12-18-ը Երևանում գումարվեց Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, որի աշխատանքներին մասնակցում էր Խորհրդային Միության և աշխարհի շուրջ 20 երկրների 270 գիտնական՝ ներգրավված էին Խորհրդային Միության և արտասահմանյան երկրների գիտահետազոտական հիմնարկները[3]: Սիմպոզիումի բացմանը Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անունից սիմպոզիումի մասնակիցներին ողջունեց ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Նա մասնավորապես ընդգծեց. «Մեր հանրապետության գիտությունների ակադեմիան հայ արվեստի ուսումնասիրության հարցերը համարում է հատուկ ուշադրության արժանի գործ»[4]: Հայ արվեստի զարգացման պատմությունն ու առանձին պրոբլեմներ ընդգրկող զեկուցումներում ի հայտ են գալիս նոր փաստեր, որոնց մեկնաբանումները լույս են սփռում հայ արվեստի պատմության մի շարք հարցերի վրա:

Սիմպոզիումը խթանեց ինչպես հայագիտական մտքի առաջընթացը, այնպես էլ նպաստեց տարբեր երկրների գիտնականների միջև համագործակցության հետագա ամրապնդմանը: Զեկուցումներն աչքի ընկան թեմաների բազմազանությամբ, զանազան խնդիրների յուրովի լուսաբանմամբ, հայկական միջնադարյան արվեստի նկատմամբ տարբեր երկրների գիտնականների հետաքրքրությամբ:

1981-ին Իտալիայում գումարվեց երրորդ սիմպոզիումը[5], 1985-ին Երևանում կայացավ չորրորդ սիմպոզիումը[6], 1988-ին Իտալիայում տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված հինգերորդ սիմպոզիումը[7]:

---

[2] ATTI Del primo simposio internazionale di arte Armena (Bergamo, 28-30 Giugno 1975). Instituto Universitario di Bergamo, Facolte di architettura del politecnico di Milano. Accademia delle scienze dell' Armenia RSS.- San Lazzaro-Venezia.-1085 p. ill.

[3] Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 1-ին, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, 1981, 302 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 2-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, 1981, 477 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 3-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, 1981, 424 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 4-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, 1981, 418 էջ:

[4] Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, №10, էջ 118:

[5] ATTI. Del terzo simposio internazionale di arte Armena. 1981 Milano /Vicenza/ Castelfranco V. /Plazzolo sul Brenta /Venezia. 25 settembre-1 ottembre.- San Lazzaro-Venezia.-659 p. ill

[6] Четвертый международный симпозиум по армянскому искусству (Тезисы докладов, Ереван, 11-17 сентября, 1985), Ереван, 1985, 326 стр.

[7] **Ասատրյան Ա.,** ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, Երևան, 2010, էջ 133-136: ATTI, Del quiento simposio internazionale di arte Armena, Venezia, Milano-Bologna-

Երևանում գումարված երկրորդ և չորրորդ սիմպոզիումներում իր աշխատանքները ծավալեց Նոր և խորհրդային շրջանի հայ կերպարվեստին և ճարտարապետությանը նվիրված մասնաճյուղը:

Մեր հոդվածի նպատակն է լուսաբանել և արժևորել Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների շրջանակում նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի հարցերին վերաբերող ուսումնասիրությունները:

Դիմանկարչություն

Այսպես, հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների շրջանակում նոր շրջանի արվեստին առնչվող բանախոսությունների մեջ մեծ թիվ էին կազմում հայկական դիմանկարչությանը նվիրված հետազոտությունները, որոնցից էր ***Նելլի Խաչատրյանի*** (Երևան) «Դիմանկարի ձևավորումը հայ գեղանկարչության մեջ» զեկուցումը[8]: Ն. Խաչատրյանը նշում է. «Հայ կերպարվեստում դիմանկարը նոր ժամանակաշրջանի ամենաֆունդամենտալ ձեռքբերումն էր»[9]: Հեղինակն առաջ էր քաշում վրացական և հայկական դիմանկարի տիպը՝ դրա լավագույն կրողը համարելով Հ. Հովնաթանյանին: Հովնաթանյանի դիմանկարների կերպարային ըմբռնման որոշ առանձնահատկությունների մասին էր ռուս արվեստաբան ***Վերա Ռազդոլսկայայի*** (Լենինգրադ) զեկուցումը[10]: Հեղինակը կարևորում է ռեալիստական դիմանկարի զարգացումը Հայաստանում և Վրաստանում՝ այն կապելով Հակոբ Հովնաթանյանի արվեստի հետ, բացահայտում Հովնաթանյանի կերտած կերպարների որոշ առանձնահատուկ գծերն ու տալիս վերարտադրման բնորոշումներ: Հ. Հովնաթանյանի դիմանկարչական ժառանգության մեկնաբանման, կերպարային մոդելավորման, երփնագրային առանձնահատկությունների բացահայտման առումով աչքի է ընկնում ***Ռուբեն Դրամբյանի*** (Երևան) «Հակոբ Հովնաթանյան» հոդվածը[11]: Թեմայի նույնականություն է նկատվում արվեստաբան ***Մարինա Սրեփանյանի*** (Երևան) «Դիմանկարը 1920-30-ական թվականների սովետահայ գեղանկարչության մեջ»[12] և «19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի դիմանկարչական ժանրի բնութագիրը հայ գեղանկարչության մեջ»[13] երկու բանախոսություններում: Հեղինակն

Firenze, 1988, 28 maggio-5 giugno,- SanLazzaro-Venezia,-859 p, ill

[8] **Хачатрян Н.** О процессе становления армянского живописного портрета, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 289-290.

[9] Նույն տեղում, էջ 289

[10] **Раздольская В.** О некоторых особенностях образной концепции портретов Акопа Овнатаняна, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 228.

[11] **Дрампян Р.** Акоп Овнатанян, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 213-218:

[12] **Степанян М.** Портрет в армянской советской живописи двадцатых годов, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 234-240:

[13] **Степанян М.** Характеристика портретного жанра в армянской живописи конца XIX - начала XX веков, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 248-249.

անդրադառնում է 1920-ականների հայրենադարձ նկարիչներ Ս. Աղաջանյանի, Փ. Թերլեմեզյանի և Մ. Սարյանի կենդանագրերին, միևնույն ժամանակ ընդգծելով դիմանկարի ժանրում Մ. Սարյանի, Գ. Գրիգորյանի, Ս. Աղաջանյանի, Ե. Թադևոսյանի կարևոր ներդրումը: Զուգահեռներ է անցկացնում Գ. Գրիգորյանի և Ե. Թադևոսյանի համանուն աշխատանքների միջև՝ դրան համադրելով հոգեբանական դիմանկարի ժանրում Ս. Աղաջանյանի վաստակը: ***Մարիամ Այվազյանը*** (Երևան) «Ինքնադիմանկարը խորհրդահայ գեղանկարչության մեջ» վերտառությամբ հոդվածում առաջին անգամ ուսումնասիրում է ինքնադիմանկարի ժանրը հայ կերպարվեստում և տալիս է ժանրի ձևավորման հիմնական դրույթները՝ չանտեսելով հետպատերազմյան շրջանի նկարիչներ Ս. Ռաշմաջյանի, Հ. Կալենցի գործերը և արծարծում 1960-80-ականների՝ Գ. Գրիգորյանի, Է. Իսաբեկյանի, Ռ. Էլիբեկյանի, Մ. Ավետիսյանի, Մ. Ասլամազյանի ինքնադիմանկարները[14]:

Խորհրդահայ կերպարվեստ

Խորհրդահայ կերպարվեստի խնդիրների, արդիական հարցադրումների առաջադրման և բանախոսության արվեստագիտական լրջագույն կառուցվածքով է հանդես գալիս ***Նոնա Ստեփանյանի*** (Երևան) «Սովետահայ գեղանկարչության ակունքները» հետազոտությունը[15]: Կարևորելով Սարյանի արվեստը, դրան համադրելով խորհրդային կերպարվեստում առկա այլ միտումները, հեղինակը դիպուկ և ճշգրիտ բնորոշումներ է տալիս 1940-50-ական թվականների կերպարվեստին, մասնավորաբար թեմատիկ, ֆիգուրատիվ գեղանկարչությանը և հատկապես սարյանական մեթոդի հետ է կապում 50-60-ական թվականների գեղանկարչության բոլոր ժանրերի զարգացումը: Իսկ «Ժամանակի խնդիրը սովետական շրջանի հայ գեղանկարչության մեջ» զեկուցման մեջ ***Ալեքսանդր Կամենսկին*** (Մոսկվա) հայ գեղանկարչության մեջ ժամանակի խնդրի մեկնաբանումն առաջին հերթին դիտարկում է Մ. Սարյանի, Ե. Քոչարի, Հ. Կարալյանի, Մ. Ավետիսյանի աշխատանքներում[16]: Պետք է նշենք, որ ***Ալեքսանդր Կամենսկու*** «1960-70 թթ. Սովետահայ գեղանկարչության ոճական էվոլյուցիայի պրոբլեմի շուրջ» և ***Մարիամ Այվազյան*** (Երևան) «Հայ գեղանկարչության ստեղծագործական որոնումները 1960-70 թթ.»[17] վերնագրված հոդվածներում նշված խնդրի արծարծում չկա: 1960-70-ականների գեղանկարչությունը կապում են Մ. Սարյանի, Մ. Ավետիսյանի արվեստի հետ և իրենց բանախոսությունները

---

[14] **Айвазян М.** Автопортрет в армянской советской живописи, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 7-9.

[15] **Степанян Н.** Истоки современной армянской живописи, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 241-249:

[16] **Каменский А.** О проблеме стилевой эволюции армянской живописи в 1960-1970-е годы, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 285-294:

[17] **Айвазян М.** Творческие поиски в армянской живописи 1960-1970-х годов, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 295-300:

նվիրում են այս երկու արվեստագետներին՝ կենտրոնանալով նրանց աշխատանքների մեկնաբանման խնդրի վրա:

Սփյուռքահայ արվեստ

Սիմպոզիումներում առանձնացան նաև սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները: Հիշատակենք հայ կերպարվեստի պատմության էջերում սակավ ուսումնասիրված հայազգի հունգարացի նկարիչ Շիմոն Հոլոշիի և լեհ նկարիչ Յան Ռուստեմի կյանքին և արվեստին վերաբերող՝ ***Եվգենի Սիմոնյանի*** (Երևան) զեկուցումը[18]: Ներկայացնելով կենսագրական տվյալներ, նշելով աշխատանքներ՝ հեղինակը մատնանշում է, որ Յան Ռուստեմը լիտվական կերպարվեստում ռոմանտիզմի հիմնադիրն է: Միևնույն ժամանակ նա անդրադառնում է նաև ուկրաինացի գրող, նկարիչ, ազգագրագետ Տարաս Շևչենկոյի և գեղանկարիչ Յան Ռուստեմի ծանոթության փաստին: Արվեստաբան ***Վահան Հարությունյանը*** (Երևան) անդրադառնում է սփյուռքահայ արվեստին վերաբերող խնդիրներին[19]: Առաջ քաշելով արտասահմանում ստեղծագործող հայ արվեստագետների երկպատկանելիության հարցը, հեղինակը գրում է. «Է. Շահինը ինչպես հայկական, այնպես էլ ֆրանսիական արվեստի մասնիկն էր կրում, դա կիրառելի է նաև Տ. Փոլատի, Լ. Թութունջյանի, Գառզուի, Ժանսեմի և այլոց համար»[20]: Հատուկ հիշատակության է արժանացնում հայկական թեմաներով ստեղծագործող նկարիչներին՝ Ա. Ֆեթվաճյան, Ս. Խաչատուրյան, Ս. Քյուրքչյան, Ժ. Օրագյան, Պ. Կիրակոսյան:

«Բուլղարահայ նկարիչների ստեղծագործությունը 20-րդ դարում» զեկուցման մեջ ուկրաինացի արվեստաբան ***Դմիտրի Ստեպովիկը***[21] (Կիև) գիտական շրջանառության մեջ դրեց ծովանկարի վարպետ Դիրան Սարկսյանի, մոնումենտալ գեղանկարիչ Նանետ Բակլարյանի, քանդակագործ Ղազարոս Պետրոսյանի, գրաֆիկ Ալեքսանդր Խաչատուրյանի և այլոց անունները: Ռուս արվեստաբան ***Նատալյա Ապչինսկայան*** (Մոսկվա) «Գառզու. ոճ և աշխարհընկալում»[22] զեկուցման մեջ ընդգծեց, որ Գառզուի հետ ծանոթությունը կայացել է Երևանում և Մոսկվայում տեղի ունեցած ցուցահանդեսների շնորհիվ: Այնուհետև հեղինակը քննության է առնում Գառզուի ստեղծագործությունը՝ առանձնացնելով ամուր գծային հիմքը և գույնի ինքնաբավությունը, հիմնական մոտիվների բազմիմաստությունը և աշխարհընկալման երկակիությունը: Արվեստաբանը Գառզուի գրաֆիկան համադրելի է համարում

---

[18] **Симонян Е.** Заметки о творчестве художников Шимона Холлоши и Яна Рустема, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 250-259:

[19] **Հարությունյան Վ.,** Արտասահմանյան հայ արվեստի պրոբլեմները ժամանակակից փուլում, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 335-343:

[20] Նույն տեղում, էջ 337:

[21] **Степовик Д.** Творчество художников-армян в Болгарии в XX веке, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 250-252.

[22] **Апчинская Н.** Жан Гарзу. Стиль и видение мира, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 19-21.

Մ. Շագալի 1950-70 թթ. օֆորտների, իսկ գեղարվեստական լեզուն՝ Բերնար Բյուֆեի ստեղծագործությունների հետ:

Նորագույն շրջանի կերպարվեստ

Սիմպոզիումի շրջանակում հայ արվեստի պատմության նորագույն շրջանին առնչվող ուսումնասիրություններում կարևորվում, արժևորվում է Մ. Սարյանի արվեստի նշանակությունը և նրա ներդրումը ժամանակակից կերպարվեստի կայացման և զարգացման գործում: ***Սոֆյա Եռլաշովան*** (Մոսկվա) «Հայաստանի արդի գեղանկարչության նոր միտումները» զեկուցման մեջ կարևորում է Սարյանի արվեստի և հայ գեղանկարչության մեջ ազգային դպրոցի կայացման գործում նրա մեծ գործառույթը[23]: Հեղինակը միևնույն ժամանակ արձանագրում է, որ ժամանակակից արվեստը Հայաստանում չի կարող սահմանափակվել միայն սարյանական ուղղությամբ և շեշտում է Հ. Կոջոյանի, Ե. Քոչարի, Գ. Գրիգորյանի, Հ. Հակոբյանի, Հ. Կալենցի և այլոց արվեստի նշանակությունը: Սարյանագիտության ասպարեզում առաջնահերթ կարևորվում է **Արարատ Աղասյանի** (Երևան) «Մ. Սարյանի սիմվոլիզմի որոշ առանձնահատկությունների մասին» բանախոսությունը՝ հագեցած փաստական տվյալներով, որոնք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեցին սիմպոզիումում ներկայացված բանախոսության շնորհիվ[24]: Հեղինակը հետազոտեց սիմվոլիզմի գեղագիտական հայեցակարգի և գեղարվեստական պրակտիկայի ազդեցությունը Սարյանի վաղ շրջանի արվեստում և առաջարկեց նոր պարբերացում[25]: Սարյանին էր նվիրված նաև արվեստաբան ***Շահեն Խաչատրյանի*** (Երևան) «Սարյանը արդի հայ նկարչության հիմնադիր» հոդվածը[26]: Խաչատրյանի կարծիքով՝ Սարյանի աշխատանքներին մի ուրիշ ազդակ էլ էր սնում, որը չկա մենագրություններում. դա նրա ծանոթությունն էր Հ. Թումանյանի, Թ. Թորամանյանի, Վ. Տերյանի և ուրիշների հետ: «Սիմվոլիզմը հայ կերպարվեստում» վերտառությամբ բանախոսության հեղինակ ***Վահան Հարությունյանը*** Մ. Սարյանին համարում է սիմվոլիստական տրամադրության կրող: Արվեստաբանի կարծիքով՝ սիմվոլիզմը հաճախ նկատվում է սփյուռքահայ արվեստագետների մոտ՝ ուղղորդվելով ռեալիզմի և սյուրռեալիզմի ներքո: Այս ուղղության հետևած արվեստագետներից հիշատակում է Տիգրան Փոլատին, Մելքոն Քեբաբչյանին և Հովսեփ Փուշմանին:

Նորագույն շրջանի արվեստագետներին նվիրված հոդվածներից առաջինը հիշատակենք ռուս արվեստաբան ***Դմիտրի Սարաբյանովի*** (Մոսկվա)

---

[23] **Ерлашова С.** Новые тенденции в современной живописи Армении, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 301-305:

[24] **Aghassian A.** Certaines particularites du symbolisme de Sarian (1903-1908), The fourth international symposium on Armenian art, (Yerevan, September 11-17, 1985), (Theses of repoerts), Yerevan, 1985, p. 7-9.

[25]**Агасян А.** IV Международный симпозиум по искусству Армении, «Советское искусствознание-22», Москва, «Советский художник», 1987, стр. 447.

[26] **Խաչատրյան Շ.,** Սարյանը արդի հայ նկարչության հիմնադիր, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 260-268:

«Գ. Յակուլովը և արևելյան արվեստի ավանդույթները» հետազոտությունը[27]: Հեղինակը զեկուցման շրջանակում շոշափել է Յակուլովի արվեստում արևելյան արվեստի ազդեցությունների հարցը, անդրադարձել նկարչի արվեստում կարևորություն ունեցող տարածության և ժամանակի խնդրին, չինական և ճապոնական գեղանկարչության և գրաֆիկայի ավանդույթների կիրառմանը, ստեղծագործությունների կոմպոզիցիոն խնդիրներին: Սիմպոզիումի շրջանակում ընթերցվեց գեղանկարիչ, քանդակագործ Ե. Քոչարին նվիրված երկու բանախոսություն, որոնց հեղինակն էր արվեստաբան ***Հասմիկ Փիլիպոսյանը*** (Երևան): «Սասունցի Դավիթը Ե. Քոչարի գրաֆիկայում և քանդակում» զեկուցման մեջ նա վերլուծեց Քոչարի «Սասունցի Դավիթ» էպոսի թեմայով ստեղծված 6 գրաֆիկական գործ, մատնանշեց նկարչի սյուժետային վերարտադրման մեթոդը[28]: Հոդվածում առավել մեծ տեղ է հատկացված «Սասունցի Դավիթ» քանդակի հետազոտմանը, ինչը նկատվում է կերպարի մանրազնին ուսումնասիրման, Քոչարի կերտած Դավթի կերպավորման առանձնահատկությունների ընդգծման, քանդակի պլաստիկ մոդելավորման կարևոր խնդիրների արծարծման մեջ: Արվեստաբանն իր երկրորդ՝ «Երվանդ Քոչարի տարածական գեղանկարչության ծագման մասին»[29] հոդվածում անդրադառնում է Քոչարի տարածական գեղանկարչությանը, կատարում վերլուծություններ ու դիտարկումներ՝ կապված Քոչարի արվեստում ժամանակակից եվրոպական արվեստի ազդեցությունների, կուբիզմի և ֆուտուրիզմի գաղափարների ներազդեցության հետ:

Հայ կերպարվեստի դասական Հակոբ Կոջոյանի արվեստին էր նվիրված ***Բորիս Զուրաբովի*** (Երևան) հոդվածը, որտեղ կարևոր տեղ է հատկացված Կոջոյանի գրքային գրաֆիկայի ուսումնասիրմանը[30]: Հետաքրքրական է նաև նույն հեղինակի «Հայկական ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոսը ռուս գրաֆիկների գործերում» հոդվածը[31], որտեղ Զուրաբովն անդրադառնում է Վլադիմիր Ֆավորսկու, Անդրեյ Գանչարովի, Միխայիլ Պիկովի՝ 1939 թվականին Հայաստան կատարած այցելությանը, ինչը հիմք հանդիսացավ էպոսի թեմայով գրաֆիկական շարքի ստեղծման համար: Արվեստաբանը ներկայացնում է էպոսին նվիրված ռուս նկարիչների գրաֆիկական գործերը՝ տալով մտահղացման, կոմպոզիցիոն, պլաստիկական մոդելավորման առանձնահատկությունները:

---

[27] **Сарабьянов Д.** Г.Якулов и традиции искусство Востока, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 233-235.

[28] **Пилипосян А.** Давид Сасунский в графике и скульптуре Кочара, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 278-284:

[29] **Пилипосян А.** О генезисе «Живописи в пространстве» Ерванда Кочара, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 226-227.

[30] **Зурабов Б.** Акоп Коджоян, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 269-277:

[31] **Зурабов Б.** Армянский народный эпос «Давид Сасунский» в иллюстрациях русских графиков, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 124-125.

Երկու դրկից երկրների մշակութային կապերի ներկայացման առումով, հայ-վրացական արվեստի փոխառնչությունների տեսակետից կարևոր և հետաքրքրական է ***Անելի Վոլսկայայի*** (Լենինգրադ) «Հայ նկարիչները Վրաստանում» հոդվածը[32]: Արվեստաբանն անդրադառնում է Վրաստանում ապրած և ստեղծագործած նկարիչներին: Թիֆլիսյան կյանքի և կենցաղի պատկերման մեջ առանձնացնում է Վանո Խոջաբեկյանին՝ նրան դիտարկելով վրաց նկարիչ Մ.Տոիձեի կողքին, ներկայացնում վրացական թանգարանում պահվող՝ Գ. Բաշինջաղյանի և Ե. Թադևոսյանի աշխատանքները: Արվեստաբանը գտնում է, որ այս համեստ ակնարկը, որի համար հիմք է ծառայել Վրաստանի թանգարանի[33] հավաքածուն, բացահայտում է երկու հարևան ժողովուրդների միջև փոխառնչությունների բնույթը և էությունը: Թիֆլիսում պահվող բազմաթիվ արխիվային նյութերի գիտական շրջանառության մեջ դնելու հանգամանքից ելնելով կարևորվում է ***Իրինա Ձուցովայի*** (Թբիլիսի) ուսումնասիրությունը Մկրտում Հովնաթանյանի՝ 19-րդ դարի առաջին կեսին Թբիլիսիի Սիոն տաճարում կատարած գեղանկարչական գործերի վերաբերյալ[34]: Ձուցովայի կարծիքով՝ ժամանակակից արվեստաբանությունը քիչ է անդրադարձել Մկրտում Հովնաթանյանի արվեստին: Ձեկուցման շրջանակում, փաստական նյութերի վրա հիմնվելով նա բացահայտում է Մ. Հովնաթանյանի և Դավիթ Գեգելիձեի միջև ստեղծագործական շփումների փաստը: Վրաստանում ստեղծագործող ժամանակակից ինքնուս նկարիչների արվեստի հիմնական միտումների մասին է ***Է. Ցիցիշվիլու*** (Թբիլիսի) հոդվածը[35]: Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում նոր անուններ՝ Հենրիխ Այվազյան, Վլադիմիր Աբելյան, Վարդան Բրինձյան, Պյոտր Արզումանով, Գրիգոր Իսրայելյան, Համբարձում Իգիթյան և այլք:

Ուշագրավ է փիլիսոփա, գեղագետ ***Յակով Խաչիկյանի*** (Երևան)՝ գույնի գեղագիտական նշանակության և արտահայտչականության խնդրին նվիրված զեկուցումը, որտեղ բանախոսը կարևորել է ինչպես գույնի էսթետիկական նշանակությունը, այնպես էլ առարկայի և գույնի փոխկապակցությունը, գույնի և լույսի փոխազդեցության ֆունկցիոնալ նշանակությունը[36]:

Արվեստ բառի բազմաիմաստության մասին է ***Ջիանկառլո Բոլոնյեզիի*** (Միլան, Իտալիա) զեկուցումը, որտեղ իտալացի լեզվաբան հայագետը դի-

---

[32] **Вольская А.** Художники-армяне в Грузии (по материалам музейных фондов Тбилиси), Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 227-233:

[33] Վրաստանի կերպարվեստի թանգարան, 2004 թվականից նաև հայտնի է որպես Շալվա Ամիրանաշվիլու անվան կերպարվեստի թանգարան, http://museum.ge/?lang_id=ENGGEO&sec_id=45 (17.01.2020):

[34] **Дзуцова И.** Живописные работы Микиртума Овнатаняна в Тбилисском Сионском соборе в первой половине XIX века, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, էջ 219-226:

[35] **Цицишвили Э.** Основные тенденции в творчестве современных самодеятельных художников и народных мастеров-армян, работающих в Грузии, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 298-300.

[36] **Хачикян Я.** Некоторые замечания об эстетической значимости и выразительности цвета, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 291-292.

տարկել է և ապացուցել, որ «արվեստ» բառը հանդիսանում է այսպես կոչված «իմաստաբանական բառապատճե»՝ համազոր կամ մոտ հունական «տեխնե» բառին[37]:

Ամփոփելով մեր հոդվածը նշենք՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն Աննա Ասատրյանը սիմպոզիումների վերաբերյալ գրում է. «Ըստ էության՝ 1988-ին Իտալիայում կայացած Հայ արվեստին նվիրված հինգերորդ միջազգային սիմպոզիումը դարձավ Արվեստի ինստիտուտի Ոսկեդարի եզրափակիչ ակորդը...»[38]:

Եզրակացություն

Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ և չորրորդ սիմպոզիումներում ներկայացված հայ կերպարվեստի նոր և նորագույն շրջաններին առնչվող զեկուցումների թիվը անցնում էր երկու տասնյակից: Սիմպոզիումը, գիտական թեմաների բազմազանության, արվեստագիտական խոր և հանգամանալից ուսումնասիրման, ժամանակի կերպարվեստի խնդիրների առաջադրման և կերպարվեստի պատմության մեջ նոր անունների բացահայտման առումով իր յուրահատուկ և խիստ կարևոր ներդրումը ունեցավ:

МЕЖДУНАРОДНЫЕ СИМПОЗИУМЫ ПО АРМЯНСКОМУ ИСКУССТВУ И ИХ РОЛЬ В ИЗУЧЕНИИ АРМЯНСКОГО ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА НОВОГО И НОВЕЙШЕГО ПЕРИОДОВ

МЕРИ КИРАКОСЯН

С 1975 года начались международные симпозиумы по армянскому искусству. Было организовано пять симпозиумов, посвященных армянскому искусству и архитектуре. В статье мы обсуждаем исследование армянского изобразительного искусства нового и новейшего периодов в упомянутых выше симпозиумах, освещаем и оцениваем более двух десятков научных статей и представляем некоторые подробности об организации этих научных форумов.

Ключевые слова – симпозиум, советское изобразительное искусство, портрет, искусство армянской диаспоры, Мартирос Сарьян, архитектура.

---

[37] **Болоньези Дж.** Многозначность слово «Арвест» - Искусство, Четвертый международный симпозиум по армянскому искусству, стр. 53-54.

[38] **Ասատրյան Ա.,** ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 137:

INTERNATIONAL SYMPOSIUMS ON ARMENIAN ART AND THEIR ROLE IN THE STUDY OF ARMENIAN FINE ART IN THE NEW AND NEWEST PERIODS

MERI KIRAKOSYAN

International symposiums on Armenian art are organized from 1975. Since then, five symposiums have been organized, dedicated to Armenian art and architecture. The article analyzes the discussions of Armenian fine arts of the new and newest periods, that took place at the above symposiums, sheds light on and assesses over two dozen of scholarly articles, as well as presents certain details regarding the organization of the symposiums.

Key words – symposium, Soviet fine art, portrait, art of the Armenian diaspora, Martiros Saryan, architecture.